

բռնումին մէջ—իրար փոխադարձաբար պաշտպանելու, և ոչ
օտարը տարամերժաբար հալածելու վարդապետութիւնը՝ որ:

Ահա այս մեծ գիծը, որ կ'անջատէ համահայութիւնը՝ հս-
չիւնով նման, բայց նպատակով հակոտնեայ համասլաւութիւն,
համագերմանութիւն և համիսլամութիւն կոչուող անհամակրելի
ու վտանգաւոր շարժումներէն»:

Ինչպէս տեսնում էք «պանարմենիզմ» խօսքը Ովկիանոսի
այս կողմում այնպիսի ցասում և զայրոյթ չի յարուցանում,
ինչպէս այս կողմում...

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօխառանի, ժողովրդական, տըն-
տեսական, գիւղացիական շաբաթա-
թերթ.—Դիւղանանեն պ. Ա. Աթա-
նասեանի խմբագրութեամբ հրատա-
րակուող այս նոր թերթի նպատա-
կը պարզ է վերև բերուած նրա վեր-
նագրից: Դիւղը և գիւղացիութիւնը
պէտք է լինի այդ օրգանի մտածո-
ղութեան զիստաւոր առարկան: Մինչև
այժմ լոյս տեսած 7 համարներում
բաւական պարզուել է այդ շաբա-
թերթի պլոգրեսիս, աշխարհա-
յեացը շօղափուած հարցերի մէջ:
սակայն մի քանի յօգուածների լի-
ուուն, նիւթը, զատողութիւնների
վերացականութիւնը աելի յարմա-
րեցրած են ինստելիգենտ քաղաքա-
ցիների, քան մեր խեղճ գիւղացինե-
րի ըմբռնողութեան: Մատչելիու-
թեան կողմից լաւ են «Դիւղանանե-
ռութիւն» բաժնում Ազգոնոմի «զը-
րոյցները»: Արդէն բոլորովին քա-
ղաքում ապրող՝ այն էլ որոշ ախովի
դրականասէրների ճաշակին՝ վայել են
պ. Ստորակէտի սրախօսական յա-
ւակնութիւնները, որոնք գիւղացու
համար բոլորովին անպէտ բաներ

են և որոնց փոխարէն աւելի նպա-
տակայամար կը լինէր տալ օգոտա-
կար գիւղելիքներ, խորհուրդներ,
գիւղացիական հարցերի պատաս-
խաններ:

Ճօվիւնոգնոր-բարոյական, պատ-
մական, հաստրակական և մանկա-
վարժական շաբաթաթերթ.՝ Եղնիկ
ք. Երզնկեանի այդ թերթը եր գը-
խաւոր նպատակն է զրել մեր եկե-
ղեցու, հոգևորականութեան և դըպ-
րոցների շուրջը պատող հարցերի
քննութիւնը: Առայժմ շաբաթաթեր-
թի մէջ աշխատող գիւղաւոր ոյժերն
են Ս. Մ., Արսէն վ., Բենիկ վ., Գր.
ք. Երզնկեան, Եղ. ք. Գեղամեան և
Բարգուղիմէու եպ. Գէորգէան: ՀՀո-
վիւր կարծես լրացնում լինի «Արա-
րատը»: Ով հետաքրքրուում մեր կը-
ղերի, եկեղեցու և դպրոցի հարցե-
րով՝ նա այդ շաբաթաթերթի մէջ
կը գտնի նիւթեր և որոշ աշխար-
հայացքով լուսաբանուած դատողու-
թիւններ, վատ չէ ունենալ մի այդ-
պիսի օրգան, որի մէջ կենարոնա-
նան մեր իրականութեան մէջ բա-

սական զգալի դեր խաղացող մի դասակարգի պահանջները, որպէսզի թէ ժողովուրդը և թէ մամուլը՝ մեր հասարական երեսյթները քննելիս և կարգադրելիս՝ կարողանան գիտակցորդն հաշուի առնել և այդ ոյժը, ինկատի ունենալ և նրա ձայնը Շերտաւորումը աւելի է պարզում կացութիւնը և անելիքը...»

Հասկեր, 1906 թ., յունուար.— ինամբով կազմուած այս համարում էլ զլիաւորապէս ի նկատի են առնուած զպրոցական հասակի մասնուկները: Ցանկալի էր, որ չմոռացուէին մանկապարտիպական հասակի երեխաներն ևս իրեւ մանկավարժական յաւելուած կցուած է Հենրիկ Վերնից՝ «Երեխաների կրթութիւնը մինչև 6 տարեկան հասակը» գրքոյի թարգմանութիւնը: Ցիշցնում ենք մեր ընթերցողներին որ մանկական պատկերազրդ այդ ամսագրի բաժնորդագինն է տարեկան, մանկավարժական բաժնով, 4 ր., արտասահմանում 12 ֆրանկ:

Բազմավիճ, փետրուար.— Հայրը բիւզանդական գրականութեան

մէջ Ցատյանի է թէ ինչ մեծ դեր են խաղացել հայերը Բիւզանդիայում: Հայազգի թագաւորների և զօրավարների, Պրոյերեսիս ճարատրականութեան մասին շատերն են լսել Հ. Սահակեան տալիս է ցարք անծանօթի շաբքը անուշներ, որոնք անպայման հայկական են, թէ Բիւզանդիական գրականութեան մէջ միայն յիշատակուած: Թունիկ, Վարդան, մնալուկ, Արտաւազդ, Խաչիկ և այլն: Այս համարում խօսումէ Արտաւազդ աստղաբաշխի մասին, որ ապրում էր Խլլ-րդ զարում: «Արդարական տեղեկութիւնների հայոց վըսայ օտար պատմչաց քովէ գրուածքն շահազգքին է մեր անցեալով հետաքրքրութեանների համար: Հայկական բանուածքների, ժողովրդական և նախարարական աստղաների, հերանարդման մասին օտար պատմիչների հատուկառ խօսքերը լոյս են սփոռում շատ մութ ինգիբների վըսայ: «Բազմավէտից այս տարուայ համարներում, ի միջի այլոց, տպւում է Հենրիկոս Սմնկելիչի «Արով ու հրովի պատմական վէսիլ թարգմանութիւնը և Ցասսօի Ներուադէմի առումը»:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր նոր բաժանորդներից նրանք, որոնք կը ցանկանան ձեռք բերել «Հաջի Բաբա» վէպի այն մասը, որ տպուել է 1905 թ. ընթացքում—պէտք է ուղարկեն ճանապարհածախք 50 կոպ. (կարելի է նամակադրօշմով): «Հաջի Բաբայի» Ա. մասը, որ լոյս է տեսել 1904 թուին և արժէ 2 րուբլի, մեր բաժանորդների համար արժէ 1 ր., ճանապարհածախքով 1 ր. 50 կ.:

Նոր բաժանորդներից նրանք, որոնք թիւրիմացութեամբ ստացած չեն լինի 1905 թ. նոյեմբեր-դեկտեմբերի համարը (ձրիաբար)՝ թող հաճեն բաց նամակով իմաց տալ մեզ այդ մասին: